բաշարժութեանց իրական պատճառն և հե-
տևանքն բնագէտներին գննելու, աւելորդ
չեմ համարիր գրել միայն այս երկու դիտո-
ղութիւններս, որ նախ քան զայն տարժա-
նելի ժամն, և զկնի նորան, հարկադրուեցայ
անելու։ Առաջին՝ որ կարծես թէ բնու-
թիւնն ինքն էր՝ գթալով իւր խղճալի որ-
դւոց վերայ, կէս ժամու չափ յառաջ իմա-
ցումն կտայ նորանց այդ սոսկալի եղելու-
թիւնը, փոխելով սովորական օդը մի այլ
ծըծմբախառն կազի՝ որ զգացնես թէ օդի
մէջ ծծումբ ծուխ տուած լինիս, որը թէ-
պէտ նոյն միջոցին ինձ հետ շատերն էլ զգա-
ցին, բայց անփորձառութիւնը արգելեց մեզ
մտաբերելու՝ թէ սրան շուտօք պէտք է յա-
ջորդէ մի տարժանելի ժամ, մի ահռելի վայր-
կեան։ Երկրորդ՝ որ զկնի նոյն երկրաշար-
ժութեանը յաջորդեց մեր քաղաքի մէջ թե-
թև չոր հազ և հարբուխ առուած ցաւը,
այնպէս որ այս քանի օրս հազիւ ուրեմն կը-
գտնուէր անձն, որ ազատ լինէր յիշեալ
ախտից և այն բաւական խառնութեանմ մի՞
գուցէ այս ևս հետևանք լինէր նոյն երկրա-
շարժութեանը։ Այս հիւանդութիւնը թէ
և տարափոխիկ է և ըստ մեծի մասն ցրտից
կ'յառաջանայ, բայց մի՞ գուցէ և օդի յան-
կարծ փոխուելուց ևս պատճառի կամ աւե-
լի ևս սաստկանայ, որը դարձեալ կ'յանձնեմ
բժշկաց՝ կամ փորձառու մարդկանց քննա-
դատութեանը»։

ՄԱՀԱՑՈՒՑԱԿ

Անցեալ դեկտեմբ. ամսոյ 16-ին առ Աստուած փոխեցաւ ս. Էջմիածնայ միաբան Տեառն Մկրտիչ Եպիսկոպոսն Յովակիմեանց Աստապատցի, և յաջորդ օրը՝ արժանավայել հանդիսիւ մարմինը 'ի գերեզման ամփոփեցաւ միաբանութեան հանգստարանին մէջ։

Հանգուցեալը 1827 թուականում կուսակրօն քահանայութեան աստիճան և վարդապետական մասնաւոր իշխանութիւն ընդունած է Աստապատայ Առաջնորդ Յովհաննէս Արք եպիսկոպոսէ Գռանակերեանց։

Բաւական միջոցով Նոր-Նախիջևանայ ս. Խաչ վանուց վանահայրութիւնը, և ապա յաւուրս երջանկայիշատակ Ներսէս և Մատթէոս Կաթողիկոսաց Մայր Էջմիածնայ մէջ զանազան պաշտօններ, ինչպէս (Վաղարշապատայ) ս. Հռիփսիմեայ վանուց ևս վանահայրութիւնը վարելէն զատ, նա և լծակի շինութեան վերակացութիւն կատարած է։

Իւր անխոնջ աշխատասիրութեամբ և հաւատարմութեամբ սիրելի եղած էր և Վեհ. Հայրապետին մերոյ, որ նորա վերակացութեան յանձնած էր ս. Էջմիածնայ տաճարի խորանաց և ուսումնարանի շինուածքները։ Եւ երկու տարի է 'ի վեր ան-նոյն սիրով և ջերմեռանդութեամբ կը վարէր։

1868 թուականում արժանացաւ Եպիսկոպոսական բարձր աստիճանին։

Վեհ. Կաթողիկոսը որ Ազգի և եկեղեցւոյ հաւատարիմ և անձնանուէր պաշտօնեայքը գիտէ 'ի կենդանութեան և յետ վախճանին պատուել, 'ի նշան յարգանացն առ հանգուցեալ Մկրտիչ եպիսկոպոսն, և 'ի խրախոյս ամեն միաբանից, բարեհաճեցաւ իւր ներկայութեամբ շքեղացուցանել նորա թաղման յուղարկաւորութեան հանդէսը, ևս հրամայեց համայն միաբանից՝ պաշտօնի, և աղքատաց՝ ողորմութիւն բաժանել՝ և կերակուր տալ։